ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1.1 Օրենսդրական ակտեր..... 1

1.2 Տեսչական մարմնի նպատակն է 2

1.3 Տեսչական մարմնի խնդիրներն են..... 2

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ..... 3

2.1 Կառուցվածքային ստորաբաժանումներ՝ 3

2.2 Տարածքային ստորաբաժանումներն են՝ 3

2.3 Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների տեղակայվածությունը 6

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 7

3.1 Տեսչական մարմնի կադրային հագեցվածությունը 7

3.2 Տեսչական մարմնի գործընթացների թվայնացման անհրաժեշտությունը..... 7

4. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ԿԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 11

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ 18

6. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 19

6.1 Սննդամթերքի անվտանգության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 19

6.2Սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները.21

7. ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 22

7.1 Անասնաբուժության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 22

7.2 Անասնաբուժության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները..... 24

8. ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՈԼՈՐՏ 29

8.1 Բուսասանիտարիայի ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 29

8.2 Բուսասանիտարիայի ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները..... 312

9. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 334

9.1 Սահմանային պետական վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը..... 334

9.2 Սահմանային պետական վերահսկողության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները 355

N 1 Հավելված (Հայաստանի Հանրապետության սննդամթեքրի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության միջոցառումների ծրագիր).....400

N 2 Հավելված (Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի կանխարգելման եվ իրազեկման տարեկան ծրագիր) 690

N3 Հավելված (Սննդամթերքի արտադրություններում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿ-HACCP) համակարգի ներդրմանն ուղղված հանրային իրազեկման ռազմավարություն) 812

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
FOOD SAFETY INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀՀ, ք. Երևան ,0051, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.: (+374 12) 40 40 40, (+374 10) 20 60 40
Էլ. փոստ: ssfs@ssfs.am
Կայք: www.snund.am

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության «Տեսչական մարմինների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1.3 կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1940-Լ որոշման 15-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավարը Տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի հաստատմանն է ներկայացնում Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որը հրապարակվում է Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում:

Տեսչական մարմինը սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմին է, որն, օրենքով սահմանված կարգով, կիրառում է պատասխանատվության միջոցներ սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

1.1 Օրենսդրական ակտեր: Տեսչական մարմինն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեսչական մարմինների մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Կերի մասին», «Անասնաբուժության մասին», «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, իրավական այլ ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1940-Լ որոշման հիման վրա:

Տեսչական մարմինն իր վերահսկողության ոլորտում իրականացնում է հետևյալ վերահսկողական միջոցառումները՝



1.2 Տեսչական մարմնի նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով, սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում անվտանգության և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը:

1.3 Տեսչական մարմնի խնդիրներն են՝ սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Տեսչական մարմնի կառուցվածքում ընդգրկված են տեսչական մարմնի ղեկավարի, տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի, տեսչական մարմնի ղեկավարի օգնականի, տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի օգնականի պաշտոնները, ինչպես նաև հետևյալ կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները,

Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական ստորաբաժանումներն են՝

2.1 **Կառուցվածքային ստորաբաժանումներ՝**

ա. Ռիսկի գնահատման (կառավարման) և վերլուծությունների վարչություն,

բ. Անասնաբուժության վարչություն,

գ. Բուսասանիտարիայի վարչություն,

դ. Սննդամթերքի անվտանգության վարչություն,

ե. Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն,

զ. Որակի ապահովման վարչություն,

է. Նմուշառման և լաբորատոր փորձաքննությունների կազմակերպման բաժին,

ը. Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին,

թ. Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին,

ժ. Արագ արձագանքման բաժին,

ժա. Միջազգային համագործակցության բաժին,

ժբ. Էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժին:

2.2 Տարածքային ստորաբաժանումներն են՝

ա. Այրում-Բագրատաշեն սահմանային հսկիչ կետ,

բ. Բավրա-Գյումրի սահմանային հսկիչ կետ,

գ. Գոգավան-Պրիվոլնոյե սահմանային հսկիչ կետ,

դ. Ագարակի սահմանային հսկիչ կետ,

ե. Երևան-«Զվարթնոց» օդանավակայան սահմանային հսկիչ կետ,

զ. Արագածոտնի մարզային կենտրոն,

է. Արարատի մարզային կենտրոն,

ը. Արմավիրի մարզային կենտրոն,

թ. Գեղարքունիքի մարզային կենտրոն,

ժ. Լոռու մարզային կենտրոն,

ժա. Կոտայքի մարզային կենտրոն,

ժբ. Շիրակի մարզային կենտրոն,

ժգ. Սյունիքի մարզային կենտրոն,

ժդ. Վայոց ձորի մարզային կենտրոն,

ժե. Տավուշի մարզային կենտրոն,

ժզ. Երևանի կենտրոն:

Տեսչական մարմնի ենթակայությամբ է գործում «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Տեսչական մարմնի կառուցվածքը ստորև ներկայացվում է N1 գծապատկերով՝

N1 Գծապատկեր



2.3 Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների տեղակայվածությունը

Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների տեղակայվածությունը ներկայացվում է N1 քարտեզով:

N1 Քարտեզ

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Տեսչական մարմնի կադրային հագեցվածությունը

Տեսչական մարմնում առկա հաստիքների քանակը 301 է, որից վարչական, հայեցողական և քաղաքացիական աշխատանք կատարողները 37-ն են, իսկ քաղաքացիական ծառայողները՝ 264:

Առկա թափուր պաշտոնների քանակը 33 է, որից 4-ը համալրելու նպատակով հայտարարված են մրցույթներ:

Նշված հաստիքներից 2022 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ համալրված են 268-ը:

3.2 Տեսչական մարմնի գործընթացների թվայնացման անհրաժեշտությունը

Տեսչական մարմնի վերահսկողական/տեսչական գործառույթ իրականացնող մասնագետների զբաղվածությամբ պայմանավորված՝ ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկվում են սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում գործունեություն իրականացնող գույքագրված տնտեսավարող սուբյեկտների մոտ 9%-ը:

Ստուգումների տարեկան ծրագրում տնտեսավարողների ավելի լայն շրջանակ ընդգրկելու համար անհրաժեշտ է գործընթացների թվայնացում, որը կապահովի ոլորտի հետ առնչություն ունեցող բոլոր գերատեսչությունների տեղեկատվական բազաների հասանելիություն և նույնականացում: Մասնավորապես՝

- Պետական եկամուտների կոմիտեի կողմից վարվող սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների բազայի հասանելիություն,
- Հայաստանի Հանրապետության կառավարության էլեկտրոնային ռեգիստրում առկա՝ սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում

գործունեություն իրականացնող տնտեսավորող սուբյեկտների վերաբերյալ կոնտակտային տվյալների հասանելիություն:

Բացի այդ, անհրաժեշտ է հետևյալ փաստաթղթերի թվայնացում՝

- անձնական սանիտարական (բժշկական) գրքույկ (տրամադրող՝ բժշկական հաստատություններ),
- անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքի համար տրամադրվող անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր (տրամադրող՝ անասնբուժական ծառայություններ, Տեսչական մարմին, տնտեսավարող սուբյեկտներ),
- սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների սանիտարական անձնագիր (տրամադրող՝ Տեսչական մարմնի),
- արտադրողի կողմից որակի և անվտանգության ցուցանիշների նկատմամբ իրականացվող հումքի և պատրաստի արտադրանքի լաբորատոր հսկողության արձանագրություններ (տրամադրվում է ներարտադրական լաբորատորիայի կամ, ըստ սահմանված կարգի, հավատարմագրված լաբորատորիայի կողմից):

Թվայնացման այս միջոցառումները ոչ միայն կխնայեն պետական ու մարդկային ռեսուրսները, այլև կկանխարգելվեն սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում առաջացող առավել շատ վտանգներ և ռիսկեր՝ կանխելով նաև մարդու կյանքին և առողջությանը սպառնացող վտանգներն ու ռիսկերը:

Հրատապ է դարձել Տեսչական մարմնի սերվերի և աշխատակիցների համակարգիչների արդիականացումը՝ հատկապես նկատի ունենալով ներդրվող նոր համակարգերը;

Որպեսզի հնարավոր լինի գործարկել ավտոմատացման նոր համակարգերը («ԱնիՓաս», «EMS», «Լամբրոն» և ԵԱՏՄ ինտեգրացման), անհրաժեշտ է ձեռք բերել հիմնական տվյալների պահպանման մեկ համակարգ և երկու SAN կոմուտատոր (SAN

Switch)՝ առկա սերվերների և տվյալների պահպանման համակարգի միացման համար: Այս նոր համակարգը կփոխարինի գործող 3PAR 7200c–ին, իսկ վերջինս կծառայի որպես պահուստային տվյալների պահպանման համակարգ: Արդյունքում կլուծվի և նոր համակարգերի համար անհրաժեշտ ծավալների խնդիրը և հնարավոր կլինի ապահովել վթարների վերականգնման ընթացակարգ: Նոր համակարգը կարող է ծառայել նվազագույնը 6 տարի:

Նոր համակարգն իր մեջ ներառում է՝

1. SAN տեսակի տվյալների պահպանման մեկ համակարգ՝ երկու ղեկավարման բլոկներով, և առնվազն 1,92TB NVME տեսակի 10 կրիչներով: Համակարգը պետք է ունենա առնվազն երաշխավորված 4:1 deduplication-ի հնարավորություն: Սարքավորումը կարող է լինել DellEMC, Hewlett Packard Enterprise և Pure Storage արտադրության:
2. SAN տեսակի երկու կոմուտատոր (SAN Switch)՝ ակտիվ 32GBPS արագությամբ FC տեսակի նվազագույնը 8 պորտերով: Սարքավորումը կարող է լինել Brocade և Cisco արտադրության:

2023 թվականին նախատեսվում է իրականացնել Տեսչական մարմնի գործընթացների թվայնացմանն ուղղված հետևյալ աշխատանքները՝

1. շարունակվելու են Տեսչական մարմնի «Լամբրոն» էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի ներդրման աշխատանքները, մասնավորապես՝ ԵԱՏՄ ընդհանուր գործընթացների հետ ինտեգրացիոն աշխատանքները և մոդուլների արդիականացման հետևյալ աշխատանքները՝

- Գործող մոդուլների արդիականացում
  - ՍՇՕ մոդուլ - սննդի շղթայի բոլոր օպերատորների բոլոր գործունեությունների համախմբում (օրինակ՝ ինչ-որ տնտեսավարող ներմուծում է հումք, տալիս է արտադրանք, վաճառում է. ցանկացած

փուլում խնդրի առաջացման դեպքում հետագծելիությամբ մինչեւ սկզբնաղբյուր կարելի է գնալ ու բացահայտել պատճառները),

- ներմուծումների մոդուլ - ներմուծման ինտեգրացիոն միջավայրի ստեղծում և ինտեգրում ԵԱՏՄ «Ընդհանուր գործընթացների» շրջանակներում ստեղծվող Միության ինտեգրված տեղեկատվական համակարգին,
- բուսասանիտարական հսկողության մոդուլ - դաշտերի գրանցում և ֆիտոսանիտարական միջոցառումների վարման գործիք,
- պլանավորման մոդուլ - ստուգումների և դիտարկումների պլանավորման գործիք՝ որն ըստ ռիսկայնության և անհատական ռիսկի ցուցանիշների կառաջարկի ստուգման ենթակա տնտեսավարողների ցանկ,
- լաբորատորիաների մոդուլ (ներքին հսկողություն) - լաբորատոր փորձաքննությունների հավաքագրման, ամփոփման և վերլուծության գործիք,
- ստուգումների մոդուլ - տեսչական գործառույթների իրականացման աշխատանքային գործիք: Մոդուլը ներառելու է նաև ստուգաթերթերի թվայնացումը և ստուգումների ընթացքի և արդյունքների մասին առցանց հարթակը:

- Նոր մոդուլների և ծավալուն գործիքների ավելացում
  - Ռիսկերի վրա հիմնված ստուգումների ցանկերի կազմում,
  - անհատական ռիսկի ցուցանիշների լրացման համար ազատ ֆունկցիոնալ դաշտերի նախապատրաստում – սննդի շղթայի բիզնես օպերատորների ռեյտինգավորման և սննդամթերքի դասակարգման համակարգ,
  - հաշվետվությունների և վիճակագրության դուրսբերում:
- Համալիր որոնում:
- 30 Պլանշետ, որոնք պետք է ապահովեն «Լամբրոն» էլեկտրոնային կառավարման համակարգի անխափան աշխատանքը:

2. Շարունակվեու է «ԵՄՍ» պարտադիր սպանդանոցային մորթ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին էլեկտրոնային եղանակով անասնաբուժական փաստաթղթերի տրամադրման, գրանցման և հաշվառման համակարգի նոր՝ թարմացված և լրամշակված, տարբերակի ներդրումը:
3. Շարունակվելու են Տեսչական մարմնի գործող էլեկտրոնային համակարգերի, մասնավորապես՝
   - կենդանի կենդանիների կարանտինի վերահսկման գործընթացի ավտոմատացման համակարգի,
   - տեխնիկական կանոնակարգերի օբյեկտ հանդիսացող արտադրանքի պետական գրանցման վկայականների համակարգի,
   - խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման «Անի Պաս» համակարգի տեխնիկական սպասարկման և արդիականացման աշխատանքները:
4. Շարունակվելու են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ «Մեկ պատուհան» համակարգի ներդրման և «Լամբրոն» էլեկտրոնային համակարգի հետ ինտեգրման աշխատանքները:

4. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ԿԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 53-րդ հոդվածի պահանջներն ապահովելու նպատակով՝ անհրաժեշտ է ձեռնարկել օրենսդրական փոփոխություններ, որոնք կարգավորված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սակայն հակասում են Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերին (օրինակ՝ «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգով սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջները):
- «Մաքսային Միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «Մաքսային Միությունում անասնաբուժասանիտարական միջոցների կիրառման մասին» N 317 որոշման համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժության մեջ օգտագործվող դեղամիջոցների և կերային հավելումների ներմուծման, փոխադրման և օգտագործման գրանցումն իրականացնում է լիազոր մարմինը, սակայն Հայաստանի Հանրապետությունում կերային հավելումների համար պետական գրանցում իրականացնող մարմնի բացակայության պարագայում տվյալ պահանջի կիրառումը հնարավոր չէ ապահովել:
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում առկա են խնդիրներ, մասնավորապես՝ սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարիայի և անասնաբուժության բնագավառներում վարչական իրավախախտումների հստակեցման, տուգանքի չափերի վերանայման, տույժի նոր տեսակների սահմանման հետ կապված:
- Բուսասանիտարիայի բնագավառում առկա անվտանգության սպառնալիքները կապված են Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների (թունաքիմիկատների) և ագրոքիմիկատների ներմուծման, իրացման և գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց կողմից այդ ապրանքների օգտագործման գործընթացների հետ: Մասնավորապես՝ պետական

վերահսկողության շրջանակներում իրականացվող դիտարկումների ընթացքում բացահայտվում են Հայաստանի Հանրապետությունում չգրանցված, ժամկետանց, սահմանված պահանջներին չհամապատասխանող պեստիցիդների և ագրոքիմիկատների իրացման դեպքեր: Ընդ որում, դիտարկում գործիքով իրականացվող վերահսկողությունը թույլ չի տալիս անհրաժեշտ գործողություններ կիրառել ժամկետանց և չգրանցված պեստիցիդների նկատմամբ, քանի որ դրանք դուրս են այդ վերահսկողական գործառույթի հարցերի շրջանակից:

Հարկ է նշել նաև, որ չնայած ամենամյա վերահսկողական գործընթացներին, մարզերում առկա է պեստիցիդների և ագրոքիմիկատների ապօրինի վաճառք, որը պոտենցիալ ռիսկ է պարունակում ոչ միայն ժամկետանց կամ ոչ պատշաճ որակի ապրանքների, այլև օգտագործման համար արգելված թունաքիմիկատների իրացման տեսանկյունից, մինչդեռ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինը չունի անմիջական գործիքակազմ օրենսդրական դաշտ բերելու այդ գործունեությունը ծավալող սուբյեկտներին:

- «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 25-րդ հոդվածում անհրաժեշտ է կատարել լրացում և արտադրության կամ վերամշակման փուլերում համապատասխանության գնահատման չենթարկված սննդամթերք հայտնաբերելու դեպքում, ինչպես նաև ստանդարտացման փաստաթղթեր չկիրառելու դեպքում (եթե դրանց կիրառումը պարտադիր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ) սահմանել տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կասեցնելու լիազորություն:
- «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասում անհրաժեշտ է կատարել լրացում և արգելել Հայաստանի Հանրապետություն ներմուծել և Հայաստանի Հանրապետությունում իրացնել կամ հանրային սննդի ծառայության ոլորտում օգտագործել սննդամթերք, սննդամթերքի հետ անմիջական

շփման մեջ գտնվող նյութեր, եթե փաթեթավորման կամ տարայի վրա նշված պիտանիության ժամկետի և անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթղթում նշված պիտանիության ժամկետի միջև առկա է անհամապատասխանություն (անկախ այն հանգամանքից, թե պիտանիության ժամկետի նշումը որ լեզվով է արված):

- «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ռիսկի գնահատումն իրականացնում է գիտական կազմակերպությունը (կենտրոնը), որին նշանակում է Կառավարությունը: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դեռևս չի նշանակվել սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառների ռիսկերի գնահատման գիտական կենտրոն, որի բացակայությունը խոչընդոտում է Տեսչական մարմնին՝ իրականացնելու սննդամթերքի անվտանգության ռիսկերի պաշտոնական, գիտականորեն հիմնավորված, անկախ, օբյեկտիվ, հավաստի և թափանցիկ ամբողջական գնահատում, կառավարում և հաղորդակցություն:
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի միջև համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը գտնվում են ոչ բավարար մակարդակի վրա, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տարածքում արձանագրված թունավորումների վերաբերյալ տեղեկատվության արագ փոխանակման հստակ ընթացակարգի բացակայությունը: Ուստի, Հայաստանի Հանրապետության տարածքում արձանագրված թունավորումների դեպքերի արձանագրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը բարձր մակարդակի հասցնելու նպատակով, անհրաժեշտ է հստակեցնել համատեղ գործողությունների հաջորդականության և տեղեկատվության փոխանակման ընթացակարգերը:

➢ Վերջին ժամանակաշրջանում հատկապես Երևան քաղաքում մեծ տարածում են ստացել շրջիկ առևտրի և հանրային սննդի՝ տեղում պատրաստվող գազավորված ըմպելիքներ, ֆրեշ, լցնովի պաղպաղակ իրացնող, կետերը և ավտոցիստեռնները (հիմնականում կվասի իրացման համար), ինչպես նաև կրպակները (մի քանի քառակուսի մետր), որոնց գործունեության վերաբերյալ բացակայում են հստակ օրենսդրական կարգավորումներ: Դա խոչընդոտներ է առաջացնում պետական վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու համար, ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է առանձին պահանջների սահմանում:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումը սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր ստուգում իրականացնելու մասին, որտեղ նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգվող տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգաթերթով նախատեսված այն հարցերի շրջանակը, որոնք անհրաժեշտ է պարզաբանել տվյալ ստուգման ընթացքում, ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման նպատակը, ժամկետը, ստուգման իրավական հիմքերը, իսկ սույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասով նախատեսված դեպքերում՝ նաև ստուգումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները, ինչպես նաև դրանք տրամադրողի տվյալները:

Դիմում կամ տեղեկատվություն ներկայացնող քաղաքացիները հաճախ խուսափում են իրենց տվյալները հրապարակելուց, ուստի նրանց տվյալները հրամանում կամ հանձնարարագրում նշելու պահանջը խոչընդոտներ է առաջացնում պետական վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու համար:

➢ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննություն չանցնելու կամ այդ անձանց սանիտարական (բժշկական) գրքույկի բացակայության կամ սահմանված կարգով լրացված չլինելու դեպքում լիազոր մարմինը որոշում է ընդունում տվյալ անձանց աշխատանքի չթույլատրելու մասին՝ մինչև խախտումը վերացնելը: Միաժամանակ, 19-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումները ստուգման վերաբերյալ վարույթի շրջանակներում կիրառվում են օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքներով կազմված ակտի հիման վրա: Ուստի, անձանց աշխատանքի չթույլատրելու մասին որոշումն ընդունվում է իրականացված ստուգման արդյունքներով կազմված ակտի հիման վրա, որի դեպքում պարտադիր բժշկական զննություն չանցած աշխատակիցները շարունակում են աշխատել մինչև ստուգման ակտի կազմումը: Պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննություն չանցնելու կամ այդ անձանց սանիտարական (բժշկական) գրքույկի բացակայության կամ սահմանված կարգով լրացված չլինելու դեպք ստուգման վերաբերյալ վարույթի շրջանակներում հայտնաբերելու պարագայում անմիջապես անձանց աշխատանքի չթույլատրելու մասին որոշման ընդունման լիազորության բացակայությունը ռիսկային է:

➢ Անասնաբուժական դեղատների գործունեությանը ներկայացվող պահանջներ, ինչպես նաև դրանից բխող ստուգաթերթեր հաստատված չեն, ինչի արդյունքում Տեսչական մարմնի կողմից անասնաբուժական դեղատներում պետական վերահսկողություն չի իրականացվում:

➢ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կանոնակարգված չեն տնտեսավարող սուբյեկտների կողմից անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթղթերի պահման ժամկետները (բացառությամբ Մաքսային Միության

հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) տեխնիկական կանոնակարգի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կենդանական ծագման չմշակված պարենային (սննդային) հումքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերի պահպանման համար նախատեսված երեք տարի ժամկետի): Վերոնշյալ ժամկետների բացակայությունը խոչընդոտներ է առաջացնում պետական վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու համար:

➢ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 2.1-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելուց և ընդունելուց հետո ստուգում իրականացնող մարմինն այն եռօրյա ժամկետում տեղադրում է իր պաշտոնական ինտերնետային կայքում: Տնտեսավարող սուբյեկտները տեսնելով, որ ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվում է իրենց մոտ ստուգման իրականացում, հաճախ օրենքով սահմանված կարգով դիմում են ներկայացնում հաշվառումից հանելու վերաբերյալ և հանվում հաշվառումից՝ փաստացի շարունակելով իրենց գործունեությունը նոր ստեղծված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակով: Արդյունքում տվյալ տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ պետական վերահսկողություն չի իրականացվում:

➢ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի համաձայն՝ դիտարկման իրականացման ժամանակ տեսուչները տեսնում են նաև այլ խախտումներ (օրինակ՝ սննդամթերքի հիգիենային, արտադրության սանիտարահիգիենիկ պահանջներին ներկայացվող), սակայն իրավասու չեն արձանագրելու և դրանց վերացման ուղղված հանձնարարականներ տալու:

➢ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը պարտավոր է ստորագրել ստուգման հրամանի օրինակի վրա՝ հաստատելով, որ

ծանուցված է ստուգման անցկացման մասին: Վերահսկողության իրականացման ընթացքում հաճախ խոչընդոտ է առաջանում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի բացակայության դեպքում, երբ փոխարինող պաշտոնատար անձ նշանակված չէ:

➢ Մաքսային Միության հանձնաժողովի «Սննդամթերքի անվտանգության մասին» 021/2011 տեխնիկական կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ Մաքսային Միության տարածքում շրջանառվող սննդամթերքը ենթակա է համապատասխանության գնահատման, սակայն այդ պահանջի իրականացումը որոշ դեպքերում հնարավոր չէ իրագործել, քանի որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում են որոշ ներմուծվող ապրանքների մասով համապատասխանություն գնահատող մարմինները:

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ իրականացվում են նրանց գործունեության ճշգրտման, նույնականացման և համալրման գործառույթներ՝ տնտեսավարողների ռիսկայնության գնահատման նպատակով: Սակայն վերոնշյալ աշխատանքների հավաստի և առավել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտություն է դառնում տվյալների ծրագրային բազայի առկայությունը՝ որին կկցվի ռիսկայնության որոշման մեթոդաբանության գնահատման դինամիկ հաշվարկային համակարգը: Տվյալների ծրագրային բազան հնարավորություն կտա ներմուծել պետական վերահսկողության արդյունքները, ստանալ թիրախային տեղեկատվություն, գնահատել դրանց ընթացիկ փոփոխությունները, անհատական և ոլորտային ռիսկանությունը:

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը, ինչպես նաև ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները ստորև ներկայացվում են ըստ վերահսկողության հիմնական ոլորտների՝

1. սննդամթերքի անվտանգություն,
2. անասնաբուժություն,
3. բուսասանիտարիա,
4. սահմանային պետական վերահսկողություն:

6. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

6.1 Սննդամթերքի անվտանգության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Ելնելով 2022 թվականին իրականացված ստուգումների, դիտարկումների, ուսումնասիրությունների արդյունքներից, ինչպես նաև հիմնվելով սպառողների դիմում–բողոքների վերլուծության վրա՝ ակնհայտ են դառնում Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում մեծ ծավալների անհայտ ծագման, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերով չուղեկցվող, կասկածելի որակ ունեցող և նույնականացում պահանջող սննդամթերքի առկայության փաստերը: Այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում ընդլայնել Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակները, մասնավորապես՝ նախորդ տարիների հետ համեմատ կատարել շուկայահանված սննդամթերքի ավելի լայն տեսակների լաբորատոր փորձաքննություններ՝ հաճախակի դարձնելով դրանց պարբերականությունը, այդ թվում՝ լաբորատոր փորձաքննություններ իրականացնող հավատարմագրված լաբորատորիաների կողմից անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային քանակների և պեստիցիդների որոշման վերահսկողություն:

Մաքսային Միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացների իրականացման ժամանակ, այդ արտադրանքի անվտանգության պահանջներից ելնելով, պատրաստողը պետք է մշակի, իրականացնի և պահպանի Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ) (անգլերեն տարբերակը՝ HACCP - Hazard Analysis and Critical Control Points) սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2015 թվականի հուլիսի 23-ի «սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում (նախնական արտադրության գործառնություններից հետո) պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի, ինչպես նաև կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի թիվ 531-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 827-Ն որոշմամբ սահմանել է HACCP համակարգի ներդրման ժամանակացույց, որը սակայն, կատարվել է մասամբ:

2022 թվականին իրականացված պետական վերահսկողության արդյունքների նախնական ամփոփումը հիմք է տալիս պնդելու, որ ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ: Որպես ոլորտում առկա ռիսկեր կարող ենք առանձնացնել կեղծված սննդամթերքի արտադրության և իրացման, մակնշման խախտումներով սննդամթերքի իրացման դեպքերը, արտադրություններում Վտանգի վերլուծության և

հսկման կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ) բացակայությունը, որն էլ հանգեցնում է ոչ պատշաճ սանիտարահիգիենիկ պայմաններում արտադրության և հանրային սննդի կազմակերպման և համապատասխանության գնահատման դաշտում առկա խնդիրների:

6.2 Սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները

2022 թվականին իրականացված ուսումնասիրությունները բացահայտեցին, որ անհրաժեշտ է վերակազմավորել և վերագործարկել սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության ու բուսասանիտարիայի ոլորտներում Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում գրանցված և Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական բազայի վարումը (պարտադիր ներառելով տնտեսավարող սուբյեկտի փաստացի գործունեությունը, գործունեության տեսակի փոփոխությունը և դադարեցումը) և պարբերական թարմացումը:

HACCP համակարգի ներդրման անհրաժեշտության վերաբերյալ նախկինում իրականացված իրազեկման ծրագրերի արդյունքները վերլուծությունները փաստել են, որ, թեև տարված աշխատանքին, այնուամենայնիվ, նպատակային խումբը՝ սննդամթերքի արտադրության ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսվարողները, հատկապես միջին և փոքր բիզնեսի ներկայացուցիչները, HACCP համակարգի վերաբերյալ քիչ ինֆորմացիա ունեն և չեն պատկերացնում ինչպես այն պետք է ներդնել: Այդ բացը լրացնելու համար Տեսչական մարմինը մշակել է սննդամթերքի արտադրություններում HACCP համակարգի ներդրմանն ուղղված

հանրային իրազեկման ռազմավարություն: Անհրաժեշտ ֆինասավորման առկայության դեպքում այն կիրականացվի:

Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել «Սննդի շղթայի բիզնես օպերատորների ռեյտինգավորման և սննդամթերքի դասակարգման» համակարգ ստեղծելու ուղղությամբ՝ հստակեցնելով կոնկրետ չափորոշիչներ: Դա աշխարհում ընդունված գործուն միջոց է շուկայում մրցակցության խթանման համար, որը նպաստում է սննդի շղթայում տնտեսավարող կազմակերպությունների աշխատանքի բարելավմանը և թողարկվող արտադրանքի որակի ու անվտանգության բարձրացմանը:

Սննդամթերքի վերահսկողության բոլոր 4 ոլորտներում իրականացվող բարեփոխումների, անցկացվող միջոցառումների ու դրանց արդյունքների հանրային իրազեկումը ևս կարևոր խթան է վերահսկողության արդյունավետության ու թափանցիկության իմաստով:

7. ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

7.1 Անասնաբուժության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում և գյուղատնտեսական կենդանիների մոտ նկատվող ընդհանուր հիվանդությունների ակտիվացման միտումները հրատապ են դարձնում հիվանդությունների դեմ համալիր միջոցառումների վերահսկողությունը: Հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու նպատակով՝ առանձնակի կարևորվում է հակաանասնահամաճարակաբանական և

անասնաբուժական ուժեղացված հսկողության, արագ արձագանքման և ախտորոշիչ միջոցառումների իրականացման գործընթացների նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև, «Մեկ առողջություն» գաղափարի համատեքստում, շահագրգիռ կառույցների հետ համատեղ մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի համալիր միջոցառումների անցկացումը:

Հաշվի առնելով աշխարհում անասնահամաճարակային ներկա իրավիճակը, մասնավորապես՝ տարածաշրջանային և հարևան երկրներում հիվանդությունների բռնկումները, առաջարկվում է 2023 թվականին իրականացնել Հայաստանի Հանրապետության համար սպառնալիք հանդիսացող հիվանդությունների անասնահամաճարակաբանության, կանխարգելման և պայքարի արդյունավետ միջոցների վերահսկողություն:

Կենդանական ծագման անվտանգ և որակյալ մթերքի և հումքի ստացման, բնակչությանը կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից պաշտպանելու, ինչպես նաև անասնաբուժության բնագավառում պետական վերահսկողության պատշաճ մակարդակ ապահովելու համար նախատեսվում է 2023 թվականին Հայաստանի Հանրապետությունում իրականացնել՝

1. Բրուցելյոզ հիվանդության կանխարգելման և վերացման համապարփակ ծրագիր՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և անասնաբուժական հաստատությունների հետ համատեղ, ինչը թույլ կտա հասկանալ այս հիվանդության տարածվածության իրական մակարդակը և վերահսկել բրուցելյոզը Հայաստանի Հանրապետությունում,

2. Դաբաղ հիվանդության մշտական ու շարունակական կանխարգելիչ և մոնիթորինգային աշխատանքներ,

3. Հայաստանի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետություն ներմուծված սննդամթերքում անասնաբուժական դեղամիջոցների մնացորդների մոնիթորինգ,

4. Մշտադիտարկում՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ համաճարակային իրավիճակի գնահատման նպատակով,

5. Սպանդանոցներում պետական վերահսկողության նպատակային և պատշաճ իրականացում՝ սպանդանոցային ծագման մթերքի իրացումն ապահովելու համար:

7.2 Անասնաբուժության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները

Համաձայն ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) 2013 թվականի գնահատման՝ նախկին Խորհրդային Միության հանրապետություններն այժմ ընդգրկված են մարդկանց շրջանում բրուցելյոզի տարածվածության ամենաբարձր մակարդակ ունեցող 25 երկրների շարքում: Բրուցելյոզն էնդեմիկ հիվանդություն է Կովկասում, որտեղ այն տարածված է թե՛ մարդկանց, թե՛ կենդանիների շրջանում: Հայաստանի Հանրապետությունում կենդանիների շրջանում բրուցելյոզի տարածվածության իրական մակարդակը հայտնի չէ և պատվաստումների միջոցով բրուցելյոզի վերահսկողության ծրագիր չի իրականացվում: Պետական միջոցներով ֆինանսավորվող հակաանասնահամաճարակային միջոցառումներում ընդգրկված է նաև բրուցելյոզի ախտորոշումը: Գյուղատնտեսական կենդանիները ենթարկվում են շճաբանական հետազոտության (խոշոր եղջերավորները՝ կովերը և արտադրող ցլերը, տարեկան 2 անգամ, մանր եղջերավոր կենդանիները՝ մայրական կազմը և արտադրող խոյերը, տարեկան 1 անգամ): Հայտնաբերված հիվանդ կենդանիները, ըստ հրահանգի, ենթարկվում են հարկադիր սպանդի: Հայաստանի Հանրապետությունում

սպանդանոցների գործարկման ակտիվության պակասի պատճառով՝ սպանդն իրականացվում է բակային պայմաններում, որն էլ նպաստում է վարակի անարգել տարածմանը: Հիվանդ կենդանիների հարկադիր սպանդը կազմակերպելու գործընթացում դժվարություններ են առաջանում նաև այն պատճառով, որ կենդանիների տերերը հրաժարվում են մթերատու կենդանիներին սպանդի ենթարկել: «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի պլան-ժամանակացույցի համաձայն՝ յուրաքանչյուր տարի իրականացվում և 2023 թվականին ևս նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետությունում առկա ԽԵԿ-ի և ՄԵԿ-ի ամբողջ գլխաքանակի արյան նմուշառում՝ բրուցելյոզ հիվանդության ախտորոշման նպատակով: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրից դուրս են մնում ընկալունակ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների սեռահասակային մյուս խմբերը (ԽԵԿ-ի մատղաշը՝ մինչև 36 ամսական, ՄԵԿ-ի մատղաշը՝ մինչև 18 ամսական), քանի որ ծրագիրը հաշվարկվում է կենդանատեսակների խմբերի որոշակի տեսակներով (ծրագրի հաշվարկն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից): Սա նույնպես հիվանդության տարածման պատճառ է: Բրուցելոզը մարդկանց փոխանցվում է հիվանդ կենդանիներից կամ ախտահարված կենդանական ծագման մթերքների օգտագործման ժամանակ: Վերջին տարիներին հանրապետության բնակչության շրջանում և գյուղատնտեսական կենդանիների մոտ նկատվող հիվանդությունների ակտիվացման միտումները հրատապ է դարձնում հիվանդության դեմ համալիր միջոցառումների իրականացումը:

Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ ախտաբանության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում դաբաղը, որի բռնկումներն անասնապահությանը պատճառում են ահռելի տնտեսական վնաս՝ հատկապես հեռագնա արոտավայրեր օգտագործող տարածաշրջաններում: Դաբաղ

հիվանդությունը տարածաշրջանային երկրների համար մշտական խնդիր է: Յուրաքանչյուր տարի, անասնահամաճարակային պետական միջոցառումների շրջանակում, կատարվում է դաբաղի նկատմամբ ընկալունակ անասնաքանակի պատվաստում: Չնայած տարեկան հակադաբաղային պատվաստումներին՝ երկիրն ապահովված չէ դաբաղի բռնկումներից, որի պատճառ կարող է լինել ինչպես միջոցառումների կատարման անարդյունավետությունը, այնպես էլ օգտագործված պատվաստանյութի որակը, անասնահամաճարակային իրավիճակի թերի հսկողությունը կամ հիվանդության հսկողության բացակայությունը: Հիվանդության հսկողության արդյունավետ և միջազգային պրակտիկայում ընդունված ձևը շճամոնիթորինգն է: Թեև Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ կատարվում են հակադաբաղային պատվաստումներ, և 2008 թվականից մինչև 2015 թվականը երկրում դաբաղ չի արձանագրվել, սակայն 2015 թվականի դեկտեմբերին արձանագրվել են վարակի բռնկումներ՝ պայմանավորված վիրուսի Ա տեսակով: 2016 թվականին գրանցվել է հիվանդության դեպք՝ պայմանավորված գենետիկորեն դաբաղի վիրուսի նոր՝ A AGVII, ենթատիպով: Ելնելով հիվանդության առանձնահատկությունից և տարածաշրջանային երկրներում տիրող իրավիճակից՝ անհրաժեշտ է իրականացնել մշտական և շարունակական մոնիթորինգային աշխատանքներ՝ համաճարակային կայուն իրավիճակը պահպանելու նպատակով: 2016 թվականից Հայաստանի Հանրապետությունում դաբաղ հիվանդության նոր դեպք չի գրանցվել: Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականին փետրվարի 15-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում դաբաղ հիվանդության շճահետազոտության 2018-2021 թվականների ռազմավարական ծրագիրը և հետագայում այն շարունակվել է մինչ 2022թ.:

Դաբաղ հիվանդության վերահսկողության ծրագրի շրջանակներում նախատեսվում է դաբաղի վերահսկողության առաջընթացի ճանապարհային քարտեզի (PCP-FMD) 2-րդ փուլից անցում կատարել 3-րդ փուլ:

Սպանդանոցներում պետական վերահսկողության նպատակային և պատշաճ իրականացումը թույլ կտա սահմանել անհրաժեշտ հարցերը, որոնք պետք է պետական վերահսկողության ժամանակ տրվեն տեսուչների կողմից՝ սպանդանոցի գործունեությունը գնահատելու, խախտումներն ու թերացումները բացահայտելու և, այդպիսով, ամբողջական պատկերը ստանալու համար: Միաժամանակ, հնարավորություն կընձեռնվի լուծել բնակչությանը բացառապես սպանդանոցային ծագման մթերքով ապահովելու խնդիրը:

Նախատեսված է 2023 թվականի մարտ ամսին գործարկել՝

- Տեսչական մարմնի կողմից վարվող «Սպանդանոցների կառավարում» միասնական էլեկտրոնային հարթակի նորացված ծրագիրը, որտեղ նախատեսվում է N5 անասնաբուժական վկայականի գեներացումը իրականացնել միայն կենդանու մորթի վերաբերյալ առցանց կարճատև տեսահոլովակ նկարահանելուց հետո (այլ տեսահոլովակ ներբեռնել հնարավոր չէ),
- N5 անասնաբուժական վկայականի պիտակների նախկինում թղթային տարբերակով տրամադրման փոխարեն էլեկտրոնային տարբերակով բաշխման կիրառություն,
- Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման էլեկտրոնային համակարգի (ԱՆԻ ՊԱԱՍ) ինտեգրում «Սպանդանոցների կառավարում» միասնական էլեկտրոնային հարթակի հետ:

- Վերոգրյալ լրամշակումների կիրառությունը հնարավորություն կտա հնարավորինս բացառել բակային մորթը և վերասկելի դարձնել սպանդանոցներում կենդանիների մորթը:

2021-2022 թվականներին իրականացված պետական վերահսկողության արդյունքների նախնական ամփոփումից հետո պարզ է դարձել, որ ոլորտում դեռևս առկա են ռիսկեր, որոնցից կարող ենք առանձնացնել Հայաստանի Հանրապետությունում կենդանիների համարակալման բացակայությունը, բակային մորթի առկայությունը, վարակիչ հիվանդությունների արձանագրման դեպքում անկած կենդանիների համար փոխհատուցման կանոնակարգման թերությունները, ինչպես նաև կենդանիների մոտ բրուցելյոզով, դաբաղով և լեշմանիոզով վարակվածության դեպքերի արձանագրումը:

Ռիսկերի նվազեցման նպատակով՝ 2023 թվականին Հայաստանի Հանրապետության բոլոր անապահով և վարակման տեսակետից վտանգված տնտեսություններում նախատեսվում է կազմակերպել վարակիչ հիվանդությունների դեմ արդյունավետ պայքար, ինչպես նաև անցկացնել մարդկանց և կենդանիների շրջանում հիվանդության տարածման կանխարգելման և վերացման միջոցառումներ, մասնավորապես՝

Հայաստանի Հանրապետությունում առկա խոշոր եղջերավոր կենդանիների համարակալումը կմեծացնի հնարավորությունը՝

1) ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման ինստիտուտի կայացման.

2) Հանրապետության տարածքում կենդանիների տեղաշարժի նկատմամբ վերահսկողության բարելավման:

Տեսչական մարմնը իր լիազորությունների շրջանակում կիրականացնի վերահսկողություն՝

- Հիվանդ կենդանիների մորթի կենտրոնացված ձևով իրականացմանը (սպանդանոցում),

- Հիվանդության հետևանքով սանիտարական սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին փոխհատուցման տրամադրմանը և այլն:

8. ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՈԼՈՐՏ

8.1 Բուսասանիտարիայի ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Համաշխարհային տնտեսության գլոբալացումը, նոր գործընկեր երկրների ի հայտ գալը, բացի տնտեսական օգուտներից, բերում են նաև բացասական հետևանքներ, որոնք Հայաստանում, հատկապես գյուղատնտեսության ոլորտում, ծայրահեղ բացասական երևույթներ են առաջացնում: Համաձայն Համաշխարհային Բանկի և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից կատարված հետազոտությունների՝ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հնդկաստանը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, բույսերի կարանտին վնասակար օրգանիզմներից տասնյակ միլիարդավոր դոլարների հասնող վնասներ են կրում (Հնդկաստան՝ 90,1 մլրդ, ԱՄՆ՝ 67,3 մլրդ, Բրազիլիա՝ 42,6 մլրդ, Ավստրալիա՝ 6,5 մլրդ, Մեծ Բրիտանիա՝ 4,36 մլրդ և այլն): Ելնելով վերոնշյալից և հաշվի առնելով մեր հարևան երկրներում և այլ առևտրային գործընկեր-երկրներում տիրող կարանտին բուսասանիտարական վիճակը (ինչպես արդեն հայտնաբերված, այնպես էլ բացակայող և սպասվող բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների ներթափանցման հավանականությունը)՝ մշտապես արդիական է Հայաստանի Հանրապետության բուսասանիտարական վիճակին լիարժեքորեն տիրապետելու հարցը, որին հասնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ամենամյա բուսասանիտարական մշտադիտարկում՝ բացահայտելու համար Հայաստանի Հանրապետության տարածքում բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների առկայությունը և

ճշգրտելու դրանց տարածվածության արեալները: Այս համատեքստում նշված միջոցառումը բուսասանիտարիայի բնագավառի հիմնական ընթացիկ գործառույթներից մեկն է:

Գյուղատնտեսական արտադրանքի որակը և բարձր ծավալներն ապահովելու համար անհրաժեշտություն է բույսերի վնասակար օրգանիզմների դեմ արդյունավետ պայքարի միջոցառումների կազմակերպումը, և այս առումով ոչ միայն կարևոր է նշված միջոցառումներն իրականացնել ժամանակին և ճիշտ եղանակով, այլև անհրաժեշտ է կիրառել պատշաճ որակի պեստիցիդներ, իսկ մշակաբույսերի աճեցման գործընթացում ապահովել անհրաժեշտ որակի ագրոքիմիկատների օգտագործումը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկը պարբերաբար համալրվում է նոր ապրանքատեսակներով, որոնց որակը և համապատասխանությունը վերահսկվում են դրանց պետական գրանցման գործընթացում՝ միջգերատեսչական հանձնաժողովի մասնագիտական եզրակացության հիման վրա: Միևնույն ժամանակ անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար վերահսկել Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող պեստիցիդների և ագրոքիմիկատների որակը և դրանց համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին: Այս ամենը կանխորոշում է նշված ապրանքների վաճառակետերի պարբերական ստուգման և դիտարկման անհրաժեշտությունը:

Ելնելով պլանավորվող միջոցառումների տրամաբանությունից՝ բուսասանիտարիայի բնագավառում Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝

1. բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերում՝ բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքների հիման վրա, դրանց դեմ պայքարի միջոցառումների առաջարկի ներկայացում, վարակի օջախների և

տարածման արեալների որոշում, Հայաստանի Հանրապետության ընթացիկ բուսասանիտարական վիճակի տիրապետում և բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների տարածման արեալների վերահսկում և կառավարում,

2. Հայաստանի Հանրապետությունում իրացվող պեստիցիդների և ագրոքիմիկատների նկատմամբ վերահսկողության իրականացում, օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանության ստուգում, խախտումների բացահայտում և օրենսդրությունից բխող համապատասխան միջոցների կիրառում, անվտանգ և պատշաճ որակի արտադրանքի իրացման ապահովում:

Բուսասանիտարիայի բնագավառում առկա խնդիրներից է նաև Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների (թունաքիմիկատների), մասնավորապես՝ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց կողմից դրանց օգտագործման գործընթացը: Չափաքանակների և սահմանափակումների ճշգրիտ պահպանման դեպքում այդ պատրաստուկների հետ կապված ռիսկերը կարելի է հասցնել նվազագույնի: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում հողօգտագործողների զգալի մասը նշված գործընթացներում շատ անգամ թույլ է տալիս կոպիտ խախտումներ, ինչը պայմանավորված է գյուղատնտեսության վարման և պեստիցիդների հետ աշխատանքի ոլորտներում ոչ բավարար գիտելիքներով: Արդյունքում որոշ դեպքերում ունենում ենք բերքի կորուստներ, որոշ դեպքերում մեծանում է շրջակա միջավայրին հասցվող վնասի ռիսկը, որոշ դեպքերում էլ շուկայահանվում են բուսական ծագման մթերքներ՝ թույլատրելի շեմը գերազանցող պեստիցիդների մնացորդային քանակների պարունակությամբ, ինչը ռիսկային է այդ մթերքը սպառող բնակչության առողջության համար:

8.2 Բուսասանիտարիայի ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները

Նախորդ տարիներին իրականացված բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքները ցույց են տվել, որ տարեցտարի Հայաստանի Հանրապետությունում ավելանում են վարակված գոտիները: Վարակի օջախներ հայտնաբերելու դեպքում, համապատասխան մարզային կենտրոնի տեսուչների կողմից տրամադրվում է խորհրդատվություն՝ սկսած կանխարգելիչ միջոցառումներից մինչև վնասակար օրգանիզմների դեմ պայքարի եղանակները: Բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքում մինչև տարվա ավարտը կազմվում է երկրի կարանտին-բուսասանիտարական վիճակի վերաբերյալ հաշվետվություն, որն ուղարկվում է առևտրային գործընկեր երկրներին, ինչը Բույսերի պաշտպանության միջազգային համաձայնագրի պահանջ է:

Հայաստանի Հանրապետությունում իրացվող պեստիցիդների և ագրոքիմիկատների նկատմամբ հսկողությունը տեսչական մարմինն իրականացնում է ամեն տարի: Նախորդ տարիներին իրականացված դիտարկումների արդյունքում հայտնաբերվել են ինչպես ժամկետանց, այնպես էլ անորակ, չգրանցված և մակնշման խախտումներով իրացվող պեստիցիդներ: Ուստի անհրաժեշտ է շարունակել իրականացնել նշված վերահսկողական միջոցառումները, որպեսզի հողօգտագործողները զերծ մնան Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող պեստիցիդների և ագրոքիմիկատների օգտագործումից:

Խնդիրների լուծման համար անհրաժեշտ է աշխատանքներ տանել պեստիցիդների կիրառման մասին հողօգտագործողների իրազեկման մակարդակի բարձրացման ուղղությամբ: Հողօգտագործողները պետք է տեղեկացված լինեն քիմիական պատրաստուկների ճիշտ, տեղին, ժամանակին և սահմանված քանակով օգտագործման, ինչպես նաև դրանց սպասման ժամկետների վերաբերյալ: Անհրաժեշտ է, որ հողօգտագործողները ժամանակին և ճիշտ որոշեն բույսերի վնասակար օրգանիզմի տեսակը, զարգացման փուլը, դրանով վարակվածության

աստիճանը, կարողանան ընտրել համապատասխան պեստիցիդը, դրանք օգտագործել ժամանակին, ճիշտ չափաքանակով և եղանակային պայմաններում: Միայն այս խնդիրների լուծման արդյունքում հնարավոր կլինի խուսափել բուսական ծագման մթերքներում պեստիցիդների մնացորդային նյութերի սահմանային թույլատրելի քանակության գերազանցման դեպքերից և առավելագույնի հասցնել վնասակար օրգանիզմների դեմ պայքարում պեստիցիդների ազդեցությունը:

2023 թվականին նախատեսվում է կազմակերպել քննարկումներ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի, շրջակա միջավայրի, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունների և Տեսչական մարմինների համակարգման գրասենյակի մասնակցությամբ՝ հետևյալ հարցերի շուրջ.

1. վաճառակետերում ժամկետանց և անորակ պեստիցիդների հայտնաբերման դեպքում դրանց ոչնչացման կամ այլ կերպ չեզոքացման հնարավորության ստեղծում,

2.պեստիցիդների վաճառակետերին ներկայացվող պահանջների համատարած խախտման և այդ պահանջների չպահպանման խնդրի լուծում,

3. պեստիցիդների որակի, շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացասական ազդեցություն թողնող երևույթի՝ վաճառակետերում պեստիցիդների չափածրարման իրականացման խնդրի լուծում,

4.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պեստիցիդների գրանցման ժամանակ դրանց կենսաբանական արդյունավետության փորձարկման հնարավորության ստեղծում,

5. պեստիցիդները գրանցելիս, դաշտային փորձարկումներ չիրականացնելով պայմանավորված, ըստ թիրախային մշակաբույսի ու կոնկրետ վնասակար օրգանիզմի գրանցում չիրականացնելու խնդրի լուծում:

9. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

9.1 Սահմանային պետական վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Տեսչական մարմինը, օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանով իրավաբանական և ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող, արտահանվող (վերաարտահանվող), Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ փոխադրվող սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների Հայաստանի Հանրապետության և Եվրասիական Տնտեսական Միության օրենսդրությամբ սահմանված պահանջներին (արտահանման և վերաարտահանման դեպքերում՝ նաև ներմուծման երկրի սահմանած պահանջներին) համապատասխանությունը պարզելու, իսկ անհամապատասխանության դեպքում՝ ներմուծումը, արտահանումը, Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ փոխադրումը և տարանցիկ փոխադրումը կանխելուն ուղղված վերահսկողական միջոցառումներ:

Սահմանային պետական վերահսկողության իրականացման նպատակն է՝

1. հեշտացնել սահմանը հատող ապրանքների օրինական շարժը՝ միաժամանակ ապահովելով Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության բարձր աստիճանը և ստեղծել բոլոր նպաստավոր պայմանները, անասնաբուժասանիտարական կարանտինային բուսասանիտարական և սանիտարակարանտինային վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու համար,

2. ամրապնդել միջգերատեսչական համագործակցության արդյունավետությունը՝ այդ թվում ապահովելով անհրաժեշտ տեխնիկական

միջոցներ պատասխանատու գործադիր մարմինների միջև սահմանային կառավարմանն առնչվող խնդիրների և սահմանի վերահսկողության իրականացման համար օպերատիվ ընթացակարգերի մասին համապատասխան տեղեկատվություն փոխանակելու համար,

3. ի նպաստ ապրանքների օրինական շարժի ապահովման՝ ամրապնդել Եվրասիական տնտեսական միության անդամ և երրորդ երկրների, ինչպես նաև միջազգային այլ գործընկերների միջև համագործակցությունը,

4. իրականացնել խորհրդատվական ծառայություններ սահմանային պետական վերահսկողության ոլորտի օրենսդրության պահանջների վերաբերյալ՝ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներին աջակցելու և լուսավորելու համար:

9.2 Սահմանային պետական վերահսկողության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները

Տեսչական մարմնի կողմից սահմանային պետական վերահսկողության գործառույթների իրականացման ժամանակ առկա են մի շարք խնդիրներ, որոնց լուծման դեպքում էլ ավելի արդյունավետ կդառնա սահմանային անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական, սանիտարակարանտինային պետական վերահսկողությունը.

- Հայաստանի Հանրապետություն անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում ու (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց երրորդ երկրների ռեեստրը (այսուհետ՝ Ռեեստր) չի համապատասխանում Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու և ապրանքների (արտադրանքի)

փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին հիմնադրույթի վերաբերյալ» N 94 որոշման պահանջներին, որի պատճառով անասնաբուժական սահմանային պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք խնդիրներ են ունենում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող անասնաբուժական հսկողության ենթակա բեռների ներմուծման թույլտվության, բեռի ձևակերպումների ժամանակ: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության երրորդ երկրների ռեեստրում առկա են անճշտություններ և թերություններ, որոնք մշտապես բացահայտվում և ճշգրտվում են (օրինակ՝ թերի են լրացված որոշ կազմակերպությունների անվանումները, հասցեները, գործունեության տեսակը, բացակայում են գործարանների համարները, կարգավիճակի մասին տեղեկատվությունը չի թարմացվում):

- Հայաստանի Հանրապետությունը չունի կերային հավելումների պետական գրանցում իրականացնող մարմին, ինչը խնդիրներ է առաջացնում կերային հավելումների ներմուծման թույլտվությունների տրամադրման ժամանակ:
- Համաձայն Մաքսային Միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Սննդամթերքի անվտանգության մասին» N 880 որոշմամբ հաստատված 021/2011 տեխնիկական կանոնակարգի պահանջի՝ սննդամթերքն ենթակա է համապատասխանության գնահատման, բայց որոշ ԱՏԳ ԱԱ ծածկագրեր ունեցող ներմուծված սննդամթերքներ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատում չեն անցնում, քանի որ Հայաստանի Հանրապետությունն այդ ապրանքատեսակների մասով չունի նշանակված մարմիններ:
- Սահմանային անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական, սանիտարակարանտինային վերահսկողության վրա ազդում է էլեկտրոնային ինֆորմացիոն ավտոմատացված համակարգերի

բացակայությունը: Սահմանային պետական վերահսկողության բիզնես գործընթացների թվայնացման արդյունքում կտրուկ կբարձրանա վերջինիս արդյունավետությունը:

- Բացակայում են անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական, սանիտարակարանտինային սահմանային պետական վերահսկողության ռիսկերի կառավարման համակարգերը, որի պատճառով նվազում է սահմանային պետական վերահսկողության արդյունավետությունը:
- Լաբորատոր փորձաքննությունների որոշման և պատվիրման ներկայիս համակարգը չի նպաստում սահմանային պետական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը: Ցանկալի է շահագրգիռ կողմերի հետ իրականացնել համապատասխան քննարկումներ, ուսումնասիրել սահմանային պետական վերահսկողության ժամանակ լաբորատոր փորձաքննության իրականացման այլ երկրների փորձը և բարեփոխել սահմանային պետական վերահսկողության ժամանակ լաբորատոր փորձաքննությունների պատվիրման համակարգը: Տեսչական մարմինը 2022 թվականին նախաձեռնել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի թիվ 218-Ն որոշման մեջ փոփոխություններ, որը կլուծի առկա որոշ խնդիրները, բայց հիմնական խնդիրները մնում են բաց (օրինակ՝ օրենսդրական բացի պատճառով՝ սահմանային պետական վերահսկողության շրջանակում լաբորատոր փորձաքննության չեն ենթարկվում ներմուծված կերերը և կերային հավելումները, Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից Հայաստանի Հանրապետություն փոխադրվող Տեսչական մարմնի ենթահսկման բեռները և այլն):

Վերոնշյալ խնդիրների կարգավորման ուղղությամբ 2023 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ քայլերը՝

- աջակցել սահմանային անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական, սանիտարակարանտինային վերահսկողության թվայնացմանը: Համապատասխան ստորաբաժանմանը և Տեսչական մարմնի համար էլեկտրոնային ինֆորմացիոն ավտոմատացված համակարգեր ստեղծելու իրավունք ձեռք բերած «Յեսոֆթ» ՍՊԸ-ին Տեսչական մարմինը սկսել է և շարունակելու է տրամադրել իր ենթահսկման բեռների ներմուծման, արտահանման, տարանցման, Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ փոխադրման ստանդարտ օպերացիոն ընթացակարգերը,
- նախատեսվում է իրականացնել համապատասխան աշխատանքներ և վերացնել Ռեեստրի անճշտությունները, ինչի արդյունքում Ռեեստրը կհամապատասխանի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N 94 որոշման պահանջներին,
- նախատեսվում է Եվրասիական տնտեսական միության անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական, սանիտարակարանտինային սահմանային պետական վերահսկողությունը կարգավորող իրավական ակտերում 2022 թվականի տեղի ունեցած փոփոխությունները ներկայացնել սահմանային պետական վերահսկողության մեջ ներգրավված պաշտոնատար անձանց և նրանց համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ,
- նոր «Մեկ պատուհան» համակարգը, որի պիլոտային տարբերակը ամբողջությամբ գործարկվել է, սպասվում է, որ մինչև 2023 թվականը կմիացվի Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից, ինչը կնպաստի սահմանային պետական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը,

- լաբորատոր փորձաքննությունների որոշման և պատվիրման ներկայիս համակարգում իրականացնել բարեփոխումներ և սննդամթերքից բացի Տեսչական մարմնի ենթահսկման այլ բեռների նկատմամբ նույնպես սահմանային պետական վերահսկողության շրջանակում ներդնել լաբորատոր փորձաքննության պատվիրման մեխանիզմներ:

Տեսչական մարմնի կողմից բացահայտված խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ուղղված՝ 2023 թվականին իրականացվելիք միջոցառումները, ըստ կատարման ժամանակացույցի, ներկայացված են N1, կանխարգելման և իրազեկման ծրագիրը՝ N2, HACCP համակարգի ներդրմանն ուղղված հանրային իրազեկման ծրագիրը N3 հավելվածներով:

N 1 Հավելված

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՔՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը
1.	Պետական վերահսկողության իրականացում	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքով սահմանված կարգով պետական վերահսկողության իրականացում սննդի շղթայի բոլոր փուլերում	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին Սահմանային հսկիչ կետեր	Սննդամթերքի անվտանգության վարչություն Անասնաբուժության վարչություն Բուսասանիտարիայի վարչություն	1-ին եռամսյակ 2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ

			Արագ արձագանքման բաժին		
2.	Մակնշման, պիտանիության և ժամկետների խախտումներով սննդամթերքի իրացման կանխարգելում	Սպառողների շրջանում իրենց իրավունքների վերաբերյալ հանրային լսումների, քննարկումների իրականացում	Սննդամթերքի անվտանգության վարչություն Անասնաբուժության վարչություն	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն	1-ին եռամսյակ
					2-րդ եռամսյակ
					3-րդ եռամսյակ
					4-րդ եռամսյակ

3.	Հայաստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միությանն անդամակցումից բխող աշխատանքների իրականացում	Եվրասիական տնտեսական միության անդամակցությամբ պայմանավորված համապատասխան իրավական ակտերի մշակման գործընթացում մասնակցություն և ընդգրկվածություն աշխատանքային խմբերում	Սննդամթերքի անվտանգության վարչություն Բուսասանիտարիայի վարչություն Անասնաբուժության վարչություն Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին	----	Տարվա ընթացքում

4.	Հայաստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միությանն անդամակցումից բխող աշխատանքների իրականացում	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների համապատասխան լիազոր մարմինների միջև տեղեկատվության փոխանակում, տեսակոնֆերանսների ձևաչափով խորհրդակցությունների և նիստերի կազմակերպում և համակարգում	Միջազգային համագործակցության բաժին	------	Տարվա ընթացքում

5.	Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական կառույցների, օտարերկրյա պետությունների լիազոր մարմինների և միջազգային կազմակերպությունների միջև համագործակցությանն ուղղված աշխատանքների իրականացում	Անասնաբուժության, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտում կենդանի կենդանիների, կենդանական և ոչ կենդանական ծագման ապրանքների ներմուծման և արտահանման ժամանակ տեղեկատվության ճշտում, տեղեկատվության փոխանակում, տեսակոնֆերանսների ձևաչափով խորհրդակցությունների և նիստերի կազմակերպում	Միջազգային համագործակցության բաժին	------	Տարվա ընթացքում

6.	Քաղաքացիներից, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից, պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված դիմում բողոքների ուսումնասիրություն և գործողությունների իրականացում	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքներով սահմանված միջոցների ձեռնարկում	Սննդամթերքի անվտանգության վարչություն Անասնաբուժության վարչություն Բուսասանիտարիայի վարչություն Արագ արձագանքման բաժին Ռիսկի գնահատման (կառավարման) և	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարվա ընթացքում

			վերլուծությունների վարչություն		
7.	Անասնաբուժության, սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարիայի բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, ճշգրտում, համալրում	Անասնաբուժության, սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարիայի բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազա	Ռիսկի գնահատման (կառավարման) և վերլուծությունների վարչություն	---	Տարվա ընթացքում
8.	Տնտեսավարող սուբյեկտների ռիսկի գնահատման նպատակով անասնաբուժության, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի	Անասնաբուժության, սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարիայի բնագավառում	Ռիսկի գնահատման (կառավարման) և վերլուծությունների վարչություն	-----	Տարվա ընթացքում

	բնագավառներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին ըստ անհատական և ոլորտային ռիսկերի ընդհանուր ռիսկայնության գնահատում	գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազա ըստ բարձր, միջին և ցածր ռիսկայնության			
9.	Կերակրի աղում յոդի պարունակության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ժամանակացույցը հաստատելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի՝ 2016 թվականի մարտի 18-ի N 74-Ա և	Պետական վերահսկողության ընթացքում նմուշառված և ներմուծված կերակրի աղում յոդի պարունակության վերաբերյալ լաբորատոր փորձաքննության արդյունքների ամփոփում և համաձայն սահմանված	Ռիսկի գնահատման (կառավարման) և վերլուծությունների վարչություն	-----	Տարվա ընթացքում

	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 23-ի N 829-Ա համատեղ հրամանով սահմանված աշխատանքների իրականացում	ձևաչափի տեղեկատվության տրամադրում			
10.	Հայաստանի Հանրապետությունում արտադրված ձկան, մեղրի մեջ արգելված կամ անցանկալի կամ առավելագույն թույլատրելի սահմանաչափեր ունեցող նյութերի առկայության և անհամապատասխանությունների վերացմանն ուղղված հսկողության մոնիթորինգային	Կենդանական ծագման մթերքում՝ ձկան, մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային ծրագրի վերահսկողության արդյունքների ամփոփ հաշվետվություն	Ռիսկի գնահատման (կառավարման) և վերլուծությունների վարչություն	----	Տարվա ընթացքում

	ծրագրի արդյունքների ամփոփում				
11.	Հայաստանի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետություն ներմուծված սննդամթերքում անասնաբուժական դեղամիջոցների մնացորդների մոնիթորինգի իրականացում	Պետական վերահսկողության իրականացում, օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանության ստուգում, խախտումների բացահայտում և օրենսդրության համաձայն համապատասխան միջոցների կիրառում, անվտանգ և պատշաճ որակի արտադրանքի իրացման ապահովում	Սննդամթերքի անվտանգության վարչություն Անասնաբուժության վարչություն	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն	Տարվա ընթացքում

		Լաբորատոր փորձաքննությունների արձանագրություն, հաշվետվություն, ակտ, հրաման, զեկուցագիր			
12.	Կենդանական ծագման մթերքում մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային ծրագրի իրականացում	Կենդանական ծագման մթերքում մնացորդային նյութերի նկատմամբ լաբորատոր փորձաքննությունների կազմակերպում և իրականացում, որը թույլ կտա վեր հանել ոլորտի բացերը և միաժամանակ թիրախավորել պետական վերահսկողության միջոցառումները	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն	Սննդամթերքի անվտանգության վարչություն Անասնաբուժության վարչություն	2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ

13.	Բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով՝ Հանրապետության ողջ տարածքում բուսասանիտարական մոնիթորինգի իրականացում	Հանրապետության տարածքում իրականացված բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքների հիման վրա բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերում, դրանց օջախների և տարածման արեալների որոշում, դրանց դեմ պայքարի միջոցառումների կիրառման առաջարկի ներկայացում, հանրապետության ընթացիկ բուսասանիտարական վիճակի տիրապետում և բույսերի կարանտին	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն	Բուսասանիտարի այի վարչություն	Տարվա ընթացքում

		վնասակար օրգանիզմների տարածման արեալների վերահսկում և կառավարում / Բուսասանիտարական մոնիթորինգի ծրագիր, փորձաքննությունների եզրակացություններ, հաշվետվություններ, պայքարի միջոցառումների առաջարկություններ			
14.	Հայաստանի Հանրապետության տարածքում գործող պեստիցիդների և ագրոքիմիկատների վաճառակետերում պետական	Հայաստանի Հանրապետությունում իրացվող պեստիցիդների և ագրոքիմիկատների որակի և սահմանված այլ պահանջների նկատմամբ	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն	Բուսասանիտարի այի վարչություն	Տարվա ընթացքում

	վերահսկողության իրականացում	վերահսկողության իրականացում, օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանության ստուգում, խախտումների բացահայտում և օրենսդրության համաձայն համապատասխան միջոցների կիրառում, անվտանգ և պատշաճ որակի արտադրանքի իրացման ապահովում Լաբորատոր փորձաքննությունների արձանագրություն,			

		հաշվետվություն, ակտ, հրաման, զեկուցագիր			
15.	Տեսչական մարմնին շրջանցած ներմուծողների հայտնաբերում, առանց Տեսչական մարմնի կողմից իրականացված սահմանային պետական վերահսկողության ենթահսկման բեռների ներմուծման բացառում	Հայաստանի Հանրապետության կառավարության 25.02.2016թ. N 169-Ն որոշմամբ սահմանված ձևաչափով Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա պետական եկամուտների կոմիտեից Հայաստանի Հանրապետություն Տեսչական մարմնի ենթահսկման բեռների վերաբերյալ ներմուծման տեղեկատվության ստացում,	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին	Բուսասանիտարի այի վարչություն	Տարվա ընթացքում

		Տեսչական մարմնի բազաներում առկա տեղեկատվության հետ դրա համեմատություն և Տեսչական մարմնին շրջանցած ներմուծողներ հայտնաբերելու դեպքում այդ ցանկը ՊԵԿ-ին տրամադրում			
16.	Օրենսդրության պահանջների խախտմամբ պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման կանխարգելում	Ակնադիտական զննում և բեռի հետ վերադարձ արտահանող երկիր	Սահմանային հսկիչ կետեր	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին Բուսասանիտարի այի վարչություն	Տարվա ընթացքում
17.	Մակնշման, պիտանիության ժամկետների խախտումներով պեստիցիդների և	Սպառողների շրջանում իրենց իրավունքների վերաբերյալ հանրային	Բուսասանիտարիայի վարչություն	----	1-ին եռամսյակ

	ագրոքիմիկատների իրացման կանխարգելում	լսումների, քննարկումների իրականացում	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն		2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ
18.	Կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ համաճարակային իրավիճակի գնահատման նպատակով մշտադիտարկման իրականացում	Կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ համաճարակային իրավիճակի գնահատման նպատակով մշտադիտարկման իրականացումը թույլ կտա գնահատել երկրի համաճարակային իրավիճակը՝ համաճարակի	Անասնաբուժության վարչություն	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն	Տարվա ընթացքում

		տարածումն կանխելու նպատակով, ինչպես նաև ունենալ փաստաթղթավորված գործողություններ և արդյունքներ՝ անհրաժեշտության դեպքում արտաքին առևտրային գործընկեր երկրների իրավասու մարմինների կողմից կիրառվող սահմանափակումների և արգելքների կանխման և երկրի կայուն իրավիճակի փաստը հաստատող ապացույցներ			

19.	Սպանդանոցներում պետական վերահսկողության նպատակային և պատշաճ իրականացում՝ սպանդանոցային ծագման մթերքի իրացումն ապահովելու համար	Սպանդանոցներում պետական վերահսկողության նպատակային և պատշաճ իրականացումը թույլ կտա սահմանել պետական վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ հարցերը, որոնք պետք է պետական վերահսկողության ժամանակ տրվեն տեսուչների կողմից՝ ամբողջական պատկերը պարզելու համար, ինչն իր հերթին հնարավորություն կընձեռի գնահատել սպանդանոցի գործունեությունը և	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն	Անասնաբուժության վարչություն	Տարվա ընթացքում

		բացահայտել խախտումներն ու թերացումները Միաժամանակ, հնարավորություն կընձեռնվի լուծել բնակչությանը բացառապես սպանդանոցային ծագման մթերքով ապահովելու խնդիրը:			
20.	Արտադրություն, վերամշակում և/կամ պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց Հայաստանի Հանրապետության երրորդ երկրների ռեեստրում	Անասնաբուժության բնագավառում տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումների պատասխան գրությունների կազմման աշխատանքների ժամանակահատվածի	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին Անասնաբուժության վարչություն	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն Միջազգային համագործակցության բաժին	Տարվա ընթացքում

	գրանցման և տվյալների փոփոխության աշխատանքներ	կրճատում, Հայաստանի Հանրապետության երրորդ երկրների ռեեստրը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N 94 որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխանեցում		Էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժին	
21.	Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների ներմուծման գործընթացի իրականացման դեպքում համապատասխան	Անասնաբուժության բնագավառում տնտեսավարող սուբյեկտների ներկայացված տվյալների ուսումնասիրություն և թույլտվության տրամադրում	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին Անասնաբուժության վարչություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջ անառության վարչություն,	Տարվա ընթացքում

	տեղեկատվության և թույլտվության տրամադրում				
22.	Սահմանային պետական վերահսկողության կազմակերպման և իրականացման արդիականացում	Միջազգային պահանջներին համապատասխան սահմանային հսկիչ կետերի շենքային և աշխատանքային պայմաններ, վերանայված սահմանային վերահսկողության ընթացակարգեր՝ սահմանային հսկիչ կետերի շենքային և աշխատանքային պայմանների բարելավման, միջազգային պահանջներին սահմանային վերահսկողության	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին	Սահմանային հսկիչ կետեր Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն Սննդամթերքի անվտանգության վարչություն	Տարվա ընթացքում

		համապատասխանեցման միջոցով		Բուսասանիտարի այի վարչություն Անասնաբուժության վարչություն	
23.	Սահմանային հսկիչ կետերի աշխատակիցների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում	Սահմանային պետական վերահսկողությանը վերաբերվող իրավական ակտերի ծանոթացում, իրավական ակտերում առկա հակասությունների մեկնաբանում	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարվա ընթացքում
24.	Նոր «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի վերջնական կիրառում, կիրառման ընթացքում խնդիրների բացահայտում,	Ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման գործընթացի ժամանակի կրճատում, թղթային թույլտվությունների	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին	Սահմանային հսկիչ կետեր, Բուսասանիտարի այի վարչություն, Անասնաբուժությ	Տարվա ընթացքում

	համակարգը մշակող ընկերությունների հետ համագործակցություն	փոխարինում էլեկտրոնայինով, տնտեսվարող-լիազոր մարմնի ներկայացուցիչ շփումների կրճատում, համակարգի հնարավորությունների բացահայտում և օգտագործում		ան վարչություն, Սննդամթերքի անվտանգության վարչություն, Ռիսկի գնահատման (կառավարման) և վերլուծություններ ի վարչություն, Նմուշառման և լաբորատոր փորձաքննություն ների կազմակերպման բաժին	
25.	Տեսչական մարմնի համար էլեկտրոնային ինֆորմացիոն	Անասնաբուժասանիտարակ ան, կարանտինային	Սահմանային հսկիչ կետերի	----------	

	ավտոմատացված համակարգեր ստեղծելու իրավունք ձեռք բերած «Յեսոֆթ» ՍՊԸ-ին ստանդարտ օպերացիոն ընթացակարգերի տրամադրում	բուսասանիտարական, սանիտարակարանտինային պետական վերահսկողության ենթակա բեռների սահմանային պետական վերահսկողության գործընթացների նկարագրում	համակարգման բաժին		
26.	Անասնաբուժության, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի բնագավառներում ներմուծման գործընթացի նկատմամբ պետական վերահսկողության նպատակով Երևան և Բավրա քաղաքում գործող մաքսային տերմինալներում նմուշառման	Լաբորատոր փորձաքննությունների կազմակերպման արդյունավետության բարձրացում	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին	Նմուշառման և լաբորատոր փորձաքննություն ների կազմակերպման բաժին	

	սենյակների և գործիքակազմի ավելացում				
27.	Սահմանային պետական վերահսկողության էլեկտրոնային ինֆորմացիոն ավտոմատացված համակարգերի ներդրում	Սահմանային պետական վերահսկողության արդյունավետության բարձրացում, թույլատվական փաստաթղթերի էլեկտոնային տրամադրում, բիզնես գործընթացի թվայնացում	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին	Էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժին	Տարվա ընթացքում
28.	Սահմանային պետական վերահսկողության շրջանակներում լաբորատոր փորձաքննությունների պատվիրման ներկայիս համակարգի բարեփոխում	Սահմանային պետական վերահսկողության արդյունավետության բարձրացում	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին	Սահմանային հսկիչ կետեր Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարվա ընթացքում

29.	Անասնաբուժության, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի բնագավառներում ներմուծման գործընթացի նկատմամբ պետական վերահսկողության շրջանակներում նմուշառում և լաբորատոր փորձաքննության կազմակերպում	Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների կազմակերպման արդյունավետության բարձրացում	Սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժին	Նմուշառման և լաբորատոր փորձաքննություն ների կազմակերպման բաժին Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարվա ընթացքում
30.	Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման նպատակով նախատեսված ապրանքներից նմուշառման և լաբորատոր	Արտահանվող սննդամթերքի անվտանգության ապահովում	Սահմանային հսկիչ կետեր	Մարզային կենտրոններ և Երևանի կենտրոն	Տարվա ընթացքում

	փորձաքննությունների իրականացման կազմակերպում				
31.	Կենդանի կենդանիների կարանտինի վերահսկման գործընթացի ավտոմատացման համակարգի սպասարկում	Կենդանի կենդանիների կարանտինի վերահսկման գործընթացի ավտոմատացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում և կատարելագործում	Էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժին	---	Տարվա ընթացքում
32.	Տեսչական մարմնի համացանցի և տեխնիկական միջոցների սպասարկում	Տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների համացանցի, հեռախոսային կապի, համակարգչային սերվերի սպասարկման և աշխատակիցների	Էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժին		Տարվա ընթացքում

		անհատական համակարգիչների ու այլ տեխնիկական միջոցների անխափան գործարկում, արդիականացում, օպերացիոն համակարգերի տեղադրում և թարմացում, սերվերների անվտանգության ապահովում, ներքին ցանցի սեգմենտացիայի վերակառուցում, ցանցային սարքավորումների ծրագրային համակարգրերի թարմացում			
33.	Էլեկտրոնային կառավարման համակարգերի սպասարկում	Պարտադիր սպանդանոցային մորթի	Էլեկտրոնային կառավարման և	---	Տարվա ընթացքում

		էլեկտրոնային կառավարման և նոր ներդրվող համակարգերի անխափան շահագործմանն ուղղված տեխնիկական սպասարկում	սպասարկման բաժին		
34.	Պետական գրանցման վկայականների մուտքագրում միասնական ռեեստր	Տեխնիկական կանոնակարգերի օբյեկտ հանդիսացող արտադրանքի պետական գրանցման վկայականների մուտքագրում միասնական ռեեստրում	Էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժին	---	Տարվա ընթացքում

N 2 Հավելված

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ

	Գործողություն	Արդյունք	Ժամկետ	Կատարող
ՀՀ	1	2	3	4
1.	Տեսչական մարմնի հետ ամենաարագ կապվելու հնարավորությունների տարածում (թեժ գծի հեռախոսահամարներ, սոցիալական ցանցեր, էլ. հասցեներ, տեղեկատվական այլ հարթակներ), իրազեկման աշխատանքներ:	Հասարակությունը տեղեկացվում է կապի այն միջոցների մասին, որոնցով կարող են հայտնել իրենց անհանգստությունը, կասկածները կամ նկատած խախտումները, ստանալ խորհրդատվություն և այլ աջակցություն:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
2.	Սպառողների իրազեկում իրենց իրավունքների մասին, իրազեկման ակցիաների կազմակերպում, սպառողների իրավունքների պաշտպանությանը նվիրված	Հասարակությունը դառնում է ավելի պահանջատեր և գրագետ, առավել պատասխանատու, ընկալում է վերահսկելու իր իրավունքը:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

	ֆորումների, համալսարաններում, դպրոցներում միջոցառումների, ՀԿ-ների հետ ակցիաների կազմակերպում, ֆիլմի ստեղծում, բուկլետի տպագրություն:			
3.	Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների սանիտարական անձնագրեր ունենալու պարտադիր պայմանի մասին սպառողների շրջանում իրազեկման միջոցառումներ:	Հասարակությունը տեղեկացվում է վերահսկման թիրախի մասին, իսկ թեժ գծին ահազանգերը խախտումները հայտնաբերելու և վերացնելու լրացուցիչ հնարավորություն է:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
4.	Սպանդանոցային ծագման միս իրացնելու և սպառելու առավելությունների մասին	Սպառողն ու տնտեսավարողը տեղեկացվում են սպանդանոցային	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և

	իրազեկման միջոցառումներ սպառողների, սեմինարներ տնտեսվարողների համար, տեսանյութերի պատրաստում:	ծագման մսի ձեռքբերման և իրացման առավելությունների մասին:		հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
5.	Սննդի շղթայի օպերատորների մոտ որակի կառավարման՝ վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (HACCP) համակարգի ռազմավարության մշակում, HACCP-ի ներդրման անհրաժեշտության և առավելությունների մասին տնտեսվարողների համար սեմինարներ, խորհրդաժողովներ, քննարկումներ, դրանց մասին	Տնտեսավարողը տեղեկացվում է որակի կառավարման՝ վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (HACCP) համակարգի առավելությունների, իր արտադրության մրցունակության, արտադրական ու արտահանման ծավալների բարձրացման հնարավորության մասին, հասարակությունն իրազեկվում է համակարգի կարևորության և այս ուղղությամբ Տեսչական մարմնի գործողությունների մասին:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին, Սննդամթերքի անվտանգության վարչություն

	հանրային իրազեկում, տեսանյութեր, բուկլետի տպագրություն:			
6.	Տեսչական մարմնի գործունեության մասին հանրային իրազեկում, տեսանյութերի ստեղծում, մամուլի ասուլիսներ, մամուլի հաղորդագրությունների պատրաստում և տարածում, սեմինարներ լրագրողների համար, այդ մասին հասարակության իրազեկում:	Հասարակության, միջազգային գործընկերների, լրագրողների շրջանում բարձրանում է Տեսչական մարմնի գործունության նկատմամբ վստահության մակարդակը, նպաստում է ոլորտը լուսաբանող լրագրողներ մասնագիտական կարողությունների, տեղեկացվածության բարձրացմանը, նրանց կողմից սննդամթերքի անվտանգությանը առնչվող խնդիրների անաչառ վերլուծությանն ու հասցեական-թիրախային նյութերի հրապարակմանը:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

7.	Տեսչական մարմնի սոցիալական հարթակներում առկա էջերի վարում (Ֆեյսբուք, Յութուբ, Տելեգրամ):	Հնարավորինս լայն հասարակության, միջազգային գործընկերների, լրագրողների շրջանակների հասանելիության ապահովում, ոլորտի լուսաբանման, տեղեկացվածության բարձրացում:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
8.	Ծանուցումներ Տեսչական մարմնի սննդի շղթայի օպերատորների բազայում գրանցվելու մասին, տնտեսավարողի իրազեկում, անիմացիոն տեսանյութի պատրաստում:	Օրենքի պահանջի շարունակական ծանուցումը նպաստում է սննդի շղթայի օպերատորների բազայի համալրմանն ու տվյալների թարմացմանը:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
9.	Իրավական նորմերի և պահանջների մասին, տնտեսավարողի իրազեկում, աջակցություն,	Տնտեսավարողը ծանոթանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխություններով և Եվրասիական տնտեսական միության	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

	խորհրդատվություն, համապատասխան ուղեցույցների տպագրություն:	տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերին և կանոններին՝ նպաստելով դրանց պահպանմանն ու առավել անվտանգ սննդամթերքի արտադրությանը:		
10.	Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտում իրականացված աշխատանքների մասին սպառողի իրազեկում, սեմինար-քննարկումներ տնտեսվարողների համար:	Հասարակությունը տեղեկանում է վտանգների, դրանց դեմ պայքարի միջոցների մասին, տնտեսվարողը դառնում է ավելի գրագետ, պատրաստված և իրազեկ:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
11.	Սպառողների իրավունքների պաշտպանության միջազգային օր.	Սպառողները տեղեկացվում են իրենց իրավունքների ու պարտականությունների մասին:	Մարտի 1-ից 15-ը	Իրազեկման, խորհրդատվության և

	իրազեկման ակցիաներ, բուկլետների տպագրություն, տեսանյութերի ստեղծում, ռեպորտաժներ, մասնակցություն հաղորդաշարերի, ֆորում:			հանրության հետ տարվող աշխատանքների բաժին Միջազգային համագործակցության բաժին
12.	Անասնաբույժի համաշխարհային օր. բուկլետների տպագրություն, տեսանյութերի ստեղծում, ռեպորտաժներ, մասնակցություն հաղորդաշարերի, ֆորում:	Բարձրացվում են անասնաբույժների հետ կապված խնդիրները, հասարակությունը տեղեկացվում է այս մասնագիտության դերի ու նշանակության մասին:	Ապրիլի վերջին շաբաթ օրը	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին Միջազգային համագործակցության բաժին
13.	Բույսերի առողջության պաշտպանության օր.	Բարձրացվում են առկա խնդիրները, հասարակությունը տեղեկացվում է այս	Մայիսի 12	Իրազեկման, խորհրդատվության և

	բուկլետների տպագրություն, տեսանյութերի ստեղծում, ռեպորտաժներ, մասնակցություն հաղորդաշարերի, ֆորում:	մասնագիտության դերի ու նշանակության մասին:		հանրության հետ տարվող աշխատանքների բաժին Միջազգային համագործակցության բաժին
14.	Սննդամթերքի անվտանգության համաշխարհային օր. բուկլետների տպագրություն, տեսանյութերի ստեղծում, ռեպորտաժներ, մասնակցություն հաղորդաշարերի, ֆորում:	Բարձրացվում են առկա խնդիրները, հասարակությունը տեղեկացվում է այս մասնագիտության դերի ու նշանակության մասին:	Հունիսի 7	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին Միջազգային համագործակցության բաժին
15.	Պայքար հակամանրէային ռեզիստենտականություն դեմ.	Հասարակությունը տեղեկացվում է հակամանրէային միջոցների	Նոյեմբերի վերջին շաբաթը	Իրազեկման, խորհրդատվության և

	բուկլետի տպագրություն, ֆիլմի ստեղծում, ռեպորտաժներ, մասնակցություն հաղորդաշարերի, խորհրդաժողով:	չարաշահման ու դրա հետ կապված խնդիրների հետ:		հանրության հետ տարվող աշխատանքների բաժին Միջազգային համագործակցության բաժին
16.	Հանդիպումներ դպրոցներում և ԲՈՒՀ-երում՝ Տեսչական մարմնի գործունեությունը թեմայով, սեմինարների կազմակերպում, բուկլետների, էջանիշերի տպագրություն:	Բարձրացվում է երիտասարդության շրջանում պատասխանատվության ու քաղաքացիական կեցվածքի դաստիարակման խնդիրը:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
17.	Տեսչական մարմնի ղեկավար անձնակազմի հարցազրույցների, հաղորդաշարերի	Սերտացվում է կապը ԶԼՄ-ների հետ, հասարակությունը հնարավորություն է ստանում առաջին աղբյուրից ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

	մասնակցության, ուղիղ եթերների կազմակերպում:			
18.	Ոլորտում գործունեություն ծավալող ՀԿ-ների հետ համագործակցություն (Տեսչական մարմնի ղեկավարին կից հասարակական խորհուրդ), հանդիպումներ, համատեղ միջոցառումներ:	Վեր են հանվում հասարակությանը հուզող խնդիրները և համատեղ լուծումներ են առաջարկվում:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
19.	Ոլորտին առնչվող մեդիանյութերի հավաքագրում, մամուլի հաղորդագրությունների պատրաստում, տարածում:	Ամփոփվում է կառույցի մասին հանրային կարծիքը, բարձրացվում է հասարակության տեղեկացվածությունը, նպաստում է կառույցի հաշվետվողականությանը:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

20.	«Սննդի շղթայի բիզնես օպերատորների ռեյտինգավորման և սննդամթերքի դասակարգման» համակարգի ստեղծմանն ուղղված քայլեր:	Նպաստում է սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացմանը, հասցեական վերահսկողությանը, ինչպես նաև խթանում է տնտեսավարողների միջև առողջ մրցակցությունը:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

N3 Հավելված

Ռ Ա Ձ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սննդամթերքի արտադրություններում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿ-HACCP) համակարգի ներդրմանն ուղղված հանրային իրազեկման

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Այսօր հանրային իրազեկումը կամ հասարակայնության հետ կապերին ուղղված աշխատանքները յուրաքանչյուր կազմակերպության գործունեության անբաժանելի մասն են: Նկատի ունենալով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի գործունեության ոլորտներն ու գործառույթները, առաջնորդվելով սննդամթերքի անվտանգության և հանրային առողջության պահպանման առաջնահերթությամբ, կարևորելով տնտեսավարողներին Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի՝ HACCP (այսուհետ՝ HACCP), սկզբունքների մասին իրազեկելու և անհրաժեշտ խորհրդատվություն տալու առաքելությունը՝ առաջանում է սննդի շղթայի օպերատորների մոտ HACCP համակարգի ներդրման կարևորությանը ուղղված հանրային իրազեկման ռազմավարության մշակման անհրաժեշտություն:

HACCP համակարգի ներդրմանն ուղղված այս հանրային իրազեկման ռազմավարությունը կազմվել է՝ հիմնվելով «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 10-րդ և 13-րդ հոդվածներով, Մաքսային Միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական

կանոնակարգն ընդունելու մասին» թիվ 880 որոշման 10-րդ հոդվածով, ինչպես նաև «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 6-րդ և 9-10-րդ հոդվածներով սահմանված պահանջների, ինչպես նաև Տեսչական մարմնի գործունեության ընթացքում տնտեսավարողների մոտ արված դիտարկումների, դրանց վերլուծության, այդ բնագավառում հանրային իրազեկման ոլորտում նախկինում կատարված աշխատանքների և դրանց ազդեցությունների վրա: Այս փաստաթուղթը սահմանում է HACCP համակարգի ներդրման վերաբերյալ հանրային իրազեկման Տեսչական մարմնի հիմնական ուղղությունները:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի «Սանիտարական, անասնաբուժասանիտարական եվ բուսասանիտարական ոլորտների եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի իրավական բնույթի նորմատիվ իրավական ակտերը հայաստանի հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» N 1009 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ են դրվել Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերը:

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացների իրականացման ժամանակ, այդ արտադրանքի անվտանգության պահանջներից ելնելով, պատրաստողը պետք է մշակի, իրականացնի և պահպանի սույն հոդվածի 3-րդ մասում շարադրված՝ վտանգի վերլուծության և հսկման**

կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ) (անգլերեն տարբերակը՝ HACCP — Hazard Analysis and Critical Control Points) սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերը:

ՄՄ ՏԿ 021/2011 տեխնիկական կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած արտադրող պարտավոր է իր գործունեությունն իրականացնել 10-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, այն է՝ իր գործունեությունն իրականացնի համաձայն HACCP համակարգի սկզբունքների:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2015 թվականի հուլիսի 23-ի «սննդի արտադրության, վերամշակման եվ բաշխման փուլերում (նախնական արտադրության գործառնություններից հետո) պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի եվ վտանգի վերլուծության եվ հսկման կրիտիկական կետերի համակարգի, ինչպես նաեվ կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի թիվ 531-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 827-Ն որոշմամբ սահմանել է HACCP համակարգի ներդրման ժամանակացույց, որը սակայն, կատարվել է մասամբ:

Նախկինում իրականացված իրազեկման ծրագրերի արդյունքները վերլուծությունները փաստել են, որ, թեև տարված աշխատանքին, այնուամենայնիվ, նպատակային խումբը՝ սննդամթերքի արտադրության ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսվարողները, հատկապես միջին և փոքր բիզնեսի ներկայացուցիչները, HACCP համակարգի վերաբերյալ քիչ ինֆորմացիա ունեն և չեն պատկերացնում ինչպես այն պետք է ներդնել:

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի՝ HACCP համակարգի ներդրման անհրաժեշտության վերաբերյալ հանրային իրազեկման հիմնական նպատակն է նպաստել անվտանգ սննդամթերքի արտադրության գործընթացում տնտեսավարող սուբյեկտների պատասխանատվության աճին և տալ անհրաժեշտ տեղեկատվություն դրա ներդրման ու գործելու ընթացակարգերի վերաբերյալ:

Ռազմավարությունը կնպաստի HACCP համակարգի կարևորության մասին հանրային իրազեկման համակարգված իրականացմանը համապատասխան տեղեկատվական միջոցներով՝ թե՛ հասարակության լայն շրջանակներում՝ ընդհանրապես, և թե՛ կոնկրետ դրա շահառուների՝ սննդի շղթայի օպերատորների, շրջանում՝ մասնավորապես: Ռազմավարության շրջանակներում կներկայացվեն հանրային իրազեկման գործընթացը և իրականացման միջոցները:

Հաշվի առնելով, որ այս ռազմավարության իրականացումը ծախսատար, աշխատատար և ժամանակատար գործընթաց է, խնդիր դնելով առավելագույն տեղեկատվություն ապահովելու նպատակը՝ ակնկալվում է, որ այն իրականացվելու է բոլոր շահագրգիռ պետական և ոչ պետական կողմերի արդյունավետ համագործակցությամբ, ինչպես նաև դոնոր-հանրության աջակցության շնորհիվ՝ ֆինանսավորման տարբեր աղբյուրներից ակնկալվող ֆինանսական միջոցների ներգրավմամբ:

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐԸ

HACCP համակարգի առանձնահատկություններից ելնելով՝ կարող ենք առանձնացնել առաջնային և երկրորդային թիրախային լսարաններ:

Առաջնային թիրախային լսարաններ՝

1. **ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐ**
   - Սննդամթերքի խոշոր, միջին և փոքր արտադրություններն՝ ըստ ոլորտների.
     - կաթնամթերքի արտադրություն
     - մսամթերքի արտադրություն
     - հացի արտադրություն
     - հրուշակեղենի արտադրություն
     - Սպանդանոցներ
   - Հանրային սննդի խոշոր, միջին և փոքր օբյեկտներ
2. **ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
   - Անհրաժեշտ է շահագրգռել այս բնագավառի ներկայացուցիչներին միանալ իրազեկման արշավին ու իրենց ոլորտների տնտեսավարողներին ներկայացնել HACCP համակարգի ներդրման կարևորությունը՝ դիտարկելով ցանկացած տնտեսվարողի որպես սննդամթերքի սպառողի:
3. **ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**
   - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից HACCP համակարգի ներդրման կարևորությանը ներկայացնելու հարցում զանգվածային լրատավական միջոցները (այսուհետ՝ ԶԼՄ) ոչ միայն տեղեկատվության փոխանցման միջոց են, այլև առանձին նպատակային լսարան,

քանի որ կոնկրետ հիմնախնդիրներին հասարակայնությունը ծանոթանում է ԶԼՄ-ների միջոցով, և վերջիններս տվյալ խնդրի վերաբերյալ որոշակի կարծիք ու վերաբերմունք են ձևավորում հասարակության շրջանում:

Երկրորդային թիրախային լսարաններ

1. **ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԹԻՄ**
   - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի, աջակցող պետական այլ մարմինների ու կազմակերպությունների՝ հանրային իրազեկման արշավ իրականացնող թիմը հանդիսանում է թիրախային լսարան, քանի որ ծրագրի նպատակների մասին հստակ և ճիշտ պատկերացումները և թիմի մոտիվացիան առանցքային նշանակություն ունեն արշավի արդյունավետ իրականացման հարցում:

2. **ԼԱՅՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**
   - HACCP համակարգի ներդրման կարևորությունը գիտակցելու հարցում լայն հասարակությունը հանդես է գալիս որպես թիրախային լսարան, քանի որ նշանակալի են լայն հասարակության վերաբերմունքը և արձագանքը դրա նկատմամբ: Հասարակության աջակցությունը, պահանջատիրությունը կամ

քննադատությունները ուղղակիորեն կանդրադառնան իրազեկման ծրագրերի իրականցման արդյունավետության վրա:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Շեշտել HACCP համակարգի ներդրման կարևորությունը, հասանելի դարձնել համակարգի սկզբունքները՝ տրամադրելով մատչելի տեղեկատվություն, առաջնային թիրախային խմբերի համար ձևավորել վստահության մթնոլորտ HACCP համակարգի նկատմամբ, տնտեսավարողին հասու դարձնել համակարգի ներդրման անհրաժեշտությունը, Տեսչական մարմնի տեսուչներին ուսուցանել համակարգի վերահսկողության առանձնահատկություններն ու մեխանիզմները, Հայաստանում ունենալ HACCP համակարգը ներդրած հնարավորինս շատ կազմակերպություններ, հասարակությանը տեղեկացնել և ընդհանուր պատկերացումներ տալ HACCP համակարգի մասին:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Հ/Հ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ /ՄԻՋՈՑԱՌՈՒՄ/ ԾՐԱԳԻՐ	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ/ԳՈՐԾԻՔ	ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ	ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (դրամ)
1.	**Սոցիալական տեսահոլովակներ (5)** սննդագետների, HACCP համակարգի ներդրման միջազգային և տեղական	• Հեռուստատեսություն • Սոցիալական մեդիա	HACCP համակարգի մասին հանրային	• Տնտեսավարողներ • ՀԿ-ներ և միություններ	Առաջնային թիրախային խմբերի մոտ HACCP	**1.000.000**

	մասնագետների, համակարգը ներդրած կազմակերպությունների ղեկավարների, ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ	• Սոցիալական հանրային հարթակներ (ՖԲ, Տելեգրամ, Յութուբ և այլն) • Տարբեր համացանցային ԶԼՄ-ներ	իրազեկվածության ապահովում	• Լայն հասարակություն	համակարգի նկատմամբ վստահության ձեռքբերում	
2.	**Անիմացիոն տեսհոլովակներ՝** ըստ արտադրական ուղղությունների (5)	• Հեռուստատեսություն • Սոցիալական մեդիա • Սոցիալական հարթակներ (Ֆեյսբուք, Տելեգրամ, Յութուբ և այլն) • Տարբեր համացանցային ԶԼՄ-ներ	HACCP համակարգի մասին հանրային իրազեկվածության ապահովում	• Տնտեսավարողներ • ՀԿ-ներ և միություններ • Լայն հասարակություն	Առաջնային թիրախային խմբերի մոտ HACCP համակարգի նկատմամբ վստահության ձեռքբերում	**1.500.000**
3.	**Տեղեկատվական նյութերի** (բուկլետ (1), բրոշյուր (1), ուղեցույց (8)) ստեղծում և տարածում արտադրություններում, հանրային սննդի կազմակերպություններում, լայն հասարակության մոտ	• Արտադրամասեր • Հանրային սննդի օբյեկտներ • Էլեկտրոնային տարբերակները՝ սոցիալական հարթակներ	HACCP համակարգի մասին թիրախային խմբերի իրազեկվածության ապահովում	• Տնտեսավարողներ • ՀԿ-ներ և միություններ • Լայն հասարակություն	Բոլոր թիրախային խմբերին HACCP համակարգի սկզբունքների մասին մատչելի տեղեկատվության տրամադրում	**1.000.000**
4.	Տեսչական մարմնի մասնագետների, HACCP համակարգի ներդրման տեղական ու միջազգային մասնագետների, համակարգն արդեն ներդրած տնտեսավարողների հետ **հարցազրույցների անցկացում, թեմատիկ հոդվածների պատրաստում**	• Էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային ԶԼՄ-ներ	HACCP համակարգի մասին թիրախային խմբերի իրազեկվածության ապահովում	• Տնտեսավարողներ • ՀԿ-ներ և միություններ • Լայն հասարակություն	Համակարգի կարևորության, այն ներդրած կազմակերպությունների որպես օրինակ ներկայացում	**500.000**
5.	**ԶԼՄ-ների հետ հարաբերություններ (Media relations) ՝** մեդիա միջոցառումների իրականցման միջոցով • Մամուլի ասուլիսներ • Մասնագիտական կլոր սեղաններ • Հեռուստաընկերության/ների, ռադիոընկերությունների տնտեսական,	• Հեռուստատեսություն • Ռադիո • Սոցիալական մեդիա • Սոցիալական հարթակներ (Ֆեյսբուք, Տելեգրամ, Յութուբ և այլն) • Տարբեր համացանցային ԶԼՄ-ներ	HACCP համակարգի մասին հանրային իրազեկվածության ապահովում	• Տնտեսավարողներ • ՀԿ-ներ և միություններ • Լայն հասարակություն	համակարգի ներկայացում, թիրախային խմբերի և հասարակության իրազեկվածության բարձրացում, HACCP համակարգի շուչջ տեղի	**500.000**

	առողջապահական, տեղեկատվական ծրագրերում հարցազրույցներ, ռեպորտաժներ և այլն				ունեցող միջոցառումների լուսաբանում	
6.	**Մասնակցություն թոք-շոուների**	• Հեռուստատեսություն	HACCP համակարգի մասին թիրախային խմբերի իրազեկվածության ապահովում	• Տնտեսավարողներ • ՀԿ-ներ և միություններ • Լայն հասարակություն	Անդրադարձ համակարգի առավելություններին՝ ներկայացնելով սկզբունքները, ներդրողների հաջողությունները, ձեռքբերումները	**500.000**
7.	**Հատուկ տեղեկատվական միջոցառումների կազմակերպում՝** • Մարտի 15 – Սպառողների իրավունքների պաշտպանության միջազգային օր • Հունիսի 7 – Սննդամթերքի անվտանգության միջազգային օր	• Հեռուստատեսություն • Ռադիո • Սոցիալական մեդիա • Սոցիալական հարթակներ (Ֆեյսբուք, Տելեգրամ, Յութուբ և այլն) • Տարբեր համացանցային ԶԼՄ-ներ	HACCP համակարգի մասին հանրային իրազեկվածության ապահովում	• Տնտեսավարողներ • ՀԿ-ներ և միություններ • Լայն հասարակություն	Հասարակության կողմից խնդրի հրատապության և ակտուալության գիտակցում, հիմնախնդիրը բարձրաձայնում	**1.000.000**
8.	**Մասնագիտական հանդիպում-քննարկումներ տնտեսավարողների հետ՝** ուղղված HACCP համակարգի ներկայացմանը (5)	• Դահլիճներ մարզերում, ակումբներ	HACCP համակարգի մասին թիրախային խմբերի իրազեկվածության ապահովում	• Տնտեսավարողներ • ՀԿ-ներ և միություններ	Անդրադարձ համակարգի առավելություններին՝ ներկայացնելով սկզբունքները, ներդրողների հաջողությունները, ձեռքբերումները	**1.000.000**
9.	**Դասընթացներ** Տեսչական մարմնի աշխատակիցների և **տնտեսավարողների համար**՝ ոլորտի տեղական ու միջազգային մասնագետների ընդգրկմամբ (5)	• Դահլիճներ մարզերում, ակումբներ	HACCP սկզբունքների ուսուցում	• Տնտեսավարողներ • Տեսչական մարմնի տեսուչներ	Աջակցություն տնտեսավարողին՝ հասկանալու համակարգի ներդրման անհրաժեշտությունն ու պահանջը Աջակցություն Տեսչական մարմնի տեսուչներին՝	**2.000.000**

					հասկանալու համակարգի վերահսկողության առանձնահատկություններն ու մեխանիզմները	
10.	Այս իրազեկման արշավին վերաբերող **հաշվետվողական էջեր** հեռուստաընկերությունների, ռադիոների ծրագրերի շրջանակներում, սոցիալական հարթակներում	• Հեռուստատեսություն • Սոցիալական մեդիա • Սոցիալական հարթակներ (Ֆեյսբուք, Տելեգրամ, Յութուբ և այլն) • Տարբեր համացանցային ԶԼՄ-ներ	Իրազեկման արշավի մասին հանրային հաշվետվողականություն	• Լայն հասարակություն	Ունենալ HACCP համակարգը ներդրած հնարավորինս շատ կազմակերպություններ	**500.000**
11.	**Ֆիլմեր** • Հաջողության պատմություններ (succsess story) (3) • իրազեկման արշավի մասին (1)	• Հեռուստատեսություն • Սոցիալական մեդիա • Սոցիալական հարթակներ (Ֆեյսբուք, Տելեգրամ, Յութուբ և այլն) • Տարբեր համացանցային ԶԼՄ-ներ	Իրազեկման արշավի մասին հանրային հաշվետվողականություն	• Լայն հասարակություն	Հասարակության տեղեկացվածություն	**1.500.000**
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵՆ						**11.000.000**